ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# ԱՇԽԱՏԱՆՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ

Թիֆլիզում հատը՝ 7 կ. ԱՌԱՋԻՆ 1906 ՏԱՐԻ Այլ տեղերում գինն է՝ 8 կ.

№ 42 ԿԻՐԱԿԻ, 26-ԻՆ ՆՈՅԵՄԲԵՐԻ № 42

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Մամուլի «ազատութեան» և քաղաքական ամենածանր պայմաններում «ԱՇԽԱՏԱՆՔԸ» բոլորեց իր գոյութեան մի տարին, նա, հաւատարիմ իր դրօշակին՝ ԱՄԵՆ ԻՆՉ ՍԿՍԵԼ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐՔԻՆ ՇԵՐՏԵՐԻՑ; իր գլխաւոր ուշադրութիւնը դարձրեց իրաւազուրկ, աղքատ և տնտեսապէս քայքայուած ՀԱՅ ԳԻՒՂԻ և նրան բաղդակից ՀԱՅ ԳԱՒԱՌԻ վրայ, մի կողմից ուսումնասիրելով այդ կեանքը, միւս կողմից արծարծելով նրա մէջ համայն Ռուսաստանի գիւղացիութեան ու դեմոկրատիայի զբաղեցնող այն հարցերն ու ձգտումները, որոնց իրագործումով միայն հնարաւոր է ժողովրդական լայն մասսաների տնտեսական, քաղաքական և իրաւական դրութեան հիմնական բարւոքումը։*

*«ԱՇԽԱՏԱՆՔԻ» ձգտումն է եղել մըտնել հայ գիւղերը և գիւղացիների մէջ, ուր և նրանք լինեն, և այդպիսով դառնալ հայ գիւղացիութեան թերթ, ուր նրանք գտնեն պատասխաններ այն բոլոր հարցերի, որոնք առնչւում են նրան և կազմում նրա այսօրւայ կեանքը։*

*Նոյն ուղղութիւնը և նոյն ձգտումը ունենալու է «ԱՇԽԱՏԱՆՔԸ» և այսուհետև՝ իր գոյութեան երկրորդ տարում, և նա այնքան աւելի մօտեցած կլինի իր հիմնական ծրագրին, որքան նա կտարածւի ժողովրդի ստորին և լայն մասսաների մէջ. ահա թէ ինչու նրա թէ ներքին բովանդակութիւնը և թէ ծաւալը կապուած է թերթի ՏԱՐԱԾՄԱՆ խնդրի հետ, և եթէ երբ և իցէ մեզ աջողւի գործը այնպէս*

digitised by A.R.A.R.@

գնել, որ իւրաքանչիւր հայաբնակ գիւղում մտնի գոնէ մի օրինակ «ԱՇԽԱՏԱՆՔ», մենք հրատարակութեան գործը կընդարձակենք, տալով ամեն ամիս մի հանրամատչելի գիրք՝ թէ գիւղատնտեսութիւնից և թէ հասարակական տնտեսական բովանդակութեամբ։

Այդպիսի մի փորձ սկսում է «ԱՇԽԱՏԱՆՔԸ» հէնց այս 1907 թւից, տալով իր բաժանորդներին ՉՈՐՍ ՀԱՏ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐՔԵՐ, որոնցից երկուսը զուտ գիւղատնտեսական, գործնական ցուցմունքներով և խորհուրդներով՝ երկրագործութեան և թանկագին բուսարուծութեան մասին, երկուսը՝ տնտեսական-հասարակական։ Բացի դա «ԱՇԽԱՏԱՆՔԸ», ցանկանալով հայ գիւղերից և գաւառական քաղաքներից փոքր առ փոքր դուրս ձգել անմիտ, անբովանդակ, լուբոչնի, գունաւոր նկարները, տալիս է իր բաժանորդներին երկու շքեղ, հարուստ եւ հայ գիւղացու կեանքին եւ աշխատանքին մօտ գունաւոր նկարներ, նկարուած մեր առաջնակարգ նկարչի ձեռքով, այն է՝

## „ԿԱՐԿՈՒՏԻՑ ՅԵՏՈՅ“
## եւ
## „ԳԱԼԻՍ ԵՆ“

Մենք հրաւիրում ենք մեր քաղաքացիներին և քաղաքաբնակ ունևոր գիւղացիներին նուիրել մի մի օրինակ «ԱՇԽԱՏԱՆՔ» այս կամ այն գիւղին, աչքի առաջ ունենալով այն բազմաթիւ դիմումները, որ անում են զանազան գիւղերից՝ նուիրել իրենց գիւղին մի օրինակ «ԱՇԽԱՏԱՆՔ»։ Մինչև մեր գիւղի մտաւորապէս և տնտեսապէս զարգացումը, որի նախօրեակին ենք կանգնած, դա միակ միջոցն է տարածելու հայ գիւղացիութեան մէջ նրա կեանքին և աշխատանքին նուիրուած մի թերթ, որի կարիքը այնքան զգալի է այսօր և մանաւանդ այսուհետև։

Եւ այսպէս, «հողի եւ ազատութեան» դրօշակի տակ, «ԱՇԽԱՏԱՆՔԸ» բացում է իր 1907 թւի բաժանորդագրութիւնը, հրաւիրելով իր նախկին աշխատակիցներին և նրանց, որոնք բաժանում են մեզ հետ մեր նշանաբանը, շարունակել մեր սկսած գործը յօգուտ հայ գիւղի և յետամնաց գաւառի։

Խմբագրութիւն

---

### ՆՈՐ-ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Յաճախ թէ հասարակութեան մէջ և թէ մանաւանդ հէնց իրենց Դաշնակցականների շարքերի միջից լսւում է զտման մասին.

—Զտւում ենք, մաքրւում, մի փոքր էլ սպասեցէք և մենք դուրս կգանք մեր իսկական գոյնով։

Եւ իսկական գոյնը հասկացւում է սօցիալիզմը։ Անցնում են ամիսներ, սակայն մենք չենք նկատում այդ զտումը։

Ո՞վ է ումից զտւում և ինչ է դառնում. — ոչինչ չենք հասկանում։

Եթէ «հին դաշնակցական» ասելով պէտք է հասկանալ «միհրանական» կոչւածներին կամ զինուորականութեան այն մասը, որը թիւրքահայկական դատի մէջ է տեսնում իր կոչումը և ընդհանրապէս դաշնակցութեան կոչումը, իսկ զտել ասելով պէտք է հասկանալ դրանց թշնամական վերաբերմունքը՝ դէպի «Երկիրն» ու նրա շուրջը ժողովածները—դա՝ մեր կարծիքով, ոչ զտումն է, ոչ մաքրումն և ոչ էլ կատարելագործումն։ Եւ այդտեղ առանձնապէս պարծենալու քիչ բան կայ։

Մենք զտումն հասկանում ենք ոչ այն գռեհիկ մտքով, որը այժմ տեղի է ունենում դաշնակցութեան մէջ, երբ մի մարմնից, անձնական միտումներից դրդւած, թէ այլ արտաքին հանգամանքներից և հաշիւներից, հեռանում են զանազան դժգոհներ, իսկ սաղմը, կորիզը՝ յանձին հին դաշնակցութեան իդէօլօգիայի մնում է իր տեղում նստած։

Ոչ. դա զտումն չէ։

Մենք զտում ընդունում ենք այլ մտքով, այլ եղանակով։ Երբ դաշնակցութեան միջից դուրս

digitised by A.R.A.R.@

կզան բոլոր, ժամանակակից գիտական եւ ծրագրային-սկզբունքային մեթոդով, իսկական սոցիալիստները և կասեն.

—Մնաս բարև, դաշնակցութիւն, մնաս բարև քո լաւով և վատով, քո անցեալ մեծ ու փոքր գործերով, քո երեկուայ «քաջագործութիւններով» ու այլ «առաքինութիւններով». Աստուած քեզ հետ, մենք որոշել ենք մեր ուղին —նա ծանր է, բայց շիտակ և կայուն. և այդ ուղիով գնում ենք՝ միանալու մեր միւս ընկերների, համախոհների հետ, որոնք գրաւում են Ռուս ազատագրութեան Ռուս յեղափոխութեան սուրբ և մեծ բանակի մէջ»։

Ահա այս է զատումը, այս է ցանկալի վախճանը այն պայքարի, որը այժմ մղւում է։

Դրան է, որ մենք սպասում ենք, այդ է, որ մենք կ'ողջունենք ողջ հոգով և, երբ կտեսնենք, կասենք.

—Վերջապէս տեղի ունեցաւ զատումը։

Իսկ քանի որ զատումը տեղի է ունենում միայն նրանով, որ հին գինին մի ամանից միւսի մէջ է ածւում, երբ դաշնակցութեան բոլոր հին իդէօլօգները մնում են «Երկրի» մէջ ցրւած և այդ «Երկիրը» համարւելու է զտւած դաշնակցութեան բերան, մենք կասենք.

—Ոչ, բարեկամներ, դուք զտւած չէք, այլ միայն ձեր շորերը փոխած, դուք սօցիալիստներ չէք, այլ նոյն ազգային-բուրժուազական կուսակցութիւնը, միայն սօցիալիստական համեմունքներով, ուրիշ ոչինչ, և որպէս այդպիսին կյիշեցնենք յայտնի առածը՝ «куда бы вы ни садитесь, а въ музыканты не годитесь»։

Ահա այն եզրակացութիւնը, որ ես դուրս եմ բերում, կարդալով «Երկրի» էջերում նրա աշխատակիցների անունների այն խառնափնթորութիւնը, որի առաջ կարմրում է ոչ միայն սօցիալիզմը, այլ և չափաւոր կադետիզմը։

Միթէ այսուհետև էլ դրանք են լինելու նոր դաշնակցութեան ղեկավարները, միթէ դրանք են նոր դաշնակցականները։

Իսկ ուր է, ուր զատումը։

* * *

Ես ատում եմ ձեզ,
Ատում՝ իմ հոգու ամբողջ
ուժգնութեամբ,
Որ կեանքն այրւող այս տխուր պահուն,
Երբ տարերային հսկայ թափերը
Իրար են բաղխում,
Դուք ձայն չէք հանում...

Դուք ձայն չ'հանեցիք,
Երբ մահն էր իշխում
Եւ ուր զմեյլն ճանկերում բռնած,
Օդում ճախրում էր ատելի ցինը։
Փարախն էր ննջում օրւայ այդ ժամին,
Եւ ուր մի փոքրիկ
Արթնութեան համար,
Փոխեցաւ գետնին մի մեծ գերեզման։
Ես ատում եմ ձեզ...

Դուք ձայն չ'հանեցիք
Եւ այն ժամանակ,
Երբ կեանքի հպարտ յորձանքը պայթեց,
Ու ազգերն նրան առաջ վազեցին...
Մի տեղ միայն դեռ վառւում էր ոխը,
Որտեղ և ընկաւ իմ ժողովուրդը։
Ես ատում եմ ձեզ...

Օ՛..., խօսքի մարդիք!
Լայկան թռչնի պէս,
Ծուարած փոքրիկ ձեր պալատներում,
Մեզ դովք երգեցիք.
Խարխուլ ու տգեղ մեր խրճիթներում
Ձեր ձայնը եկաւ մեզ սիրտաշոյեց.
Մենք, հիմա՛ր, ընկանք։
Ատում եմ... ես ձեզ...

Ա. ԶԱՆԵԱՆ

## ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Անցեալ շաբթին հայ հասարակական կեանքում տեղի ունեցաւ մի երեւոյթ, որը արժանի է ուշադրութեան։

Թիֆլիզում կազմակերպւեց «Հայկական Դեմոկրատիական կուսակցութիւնը», որը և մանրամասն ծրագրի տեղ, առայժմ բաց է թողել մի

digitised by A.R.A.R.@

յայտարարութիւն (դեկլարացիայ)՝ որպէս իր նըպատակների և քաղաքական ձգտումների գլխաւոր ուրւագծեր։

«Հայկական դեմօկրատիկական Կուսակցութիւնը» Ռուսաստանում գոյութիւն ունեցող մի կուսակցութեան ճիւղ չէ, այլ նա ինքնուրոյն մի կուսակցութիւն է, որը սակայն իր հիմնական՝ քաղաքական ձգտումներով շատ մօտ է Ժողովրդական Ազատութեան (կադէտների) կուսակցութեանը,

Որչափ և մենք մեր ձգտումներով, մեր դաւանանքներով տարբեր լինենք այն հայեացքներից, որ ունի Ժողովրդական Ազատութեան կուսակցութիւնը, որպէս և Հայկական Դեմօկրատական կուսակցութիւնը» այնուամենայնիւ մենք ողջ հոգով ողջունում ենք հայկական կեանքի մէջ նրա առաջանալը։

Մի ժողովրդի ներքին և հասարակական կեանքում չկայ աւելի վատ, անբարոյականացնող և վնասակար դրութիւն, քան այն, երբ հասարակութեան անդամները անկապ, խառը, անորոշ հետևապէս և անգոյն մի դանգւած են կազմում, որոնցից իւրաքանչիւրը մտածում և գործում է որպէս իր քէֆն է ուզում, առանց որոշ աշխարհայեացքի, որոշ դաւանանքի, որոշ ձգտումների։ Այդպիսի հասարակութիւնը իրօք մի ամբոխ է, ամբոխին յատուկ բոլոր վատ ինստինկտներով։ Ոչ մի ստեղծագործութիւն, ոչ մի մտածւած քայլ չի կարելի սպասել այդպիսի մի ամբոխից։

Նա այսօր կանի այն, ինչ որ երէկ քարկոծում էր, և ընդհակառակը, բայց մեծ մասամբ նա ոչինչ չի անի և կրաւորականանայ կամ իներտ, անտարբեր վերաբերմունքով դէպի հասարակական և քաղաքական մեծ նշանակութիւն ունեցող հարցերն ու ձգտումները և կամ, որ աւելի վատն է, զանազան անկիւններում կ՚բամբասէ սրան կամ նրան՝ առանց կարողանալու որպէս կազմակերպւած, որոշւած մի ամբողջութիւն իր վերաբերմունքն ունենալ դէպի հրապարակի վրայ • դրած զանազան խոշոր երևոյթներն ու շարժումները։

Հայ ժողովուրդը, գոնէ նրա որոշ մասերը, շնորհիւ մի կողմից ժամանակի ոգու, միւս կողմից՝ հետևելով Ռուսաստանում ապրող այլ ազգերի օրինակին, վերջապէս սկսել է զատել, իրենց ֆիզիօնոմիան ունենալ։

Եւ որչափ այդ զատումը լինի որոշ, այնքան լաւ։ Ահա այդ մտքով և մենք ողջունում ենք «Հայկական Դեմօկրատական կուսակցութեան» առաջ գալը և միակ բանը, որ այսօր կարող ենք նրան ասել, այդ կլինի հետևեալը։

ա) Մշակել պարզ, որոշ մի ծրագիր իր բոլոր մանրամասնութիւններով, որպէս զի ամեն ոք իմանայ այդ կուսակցութեան դաւանանքը՝ դէպի ամեն տեսակ հարցեր, ուրիշ խօսքով, անհրաժեշտ է ծրագրային կերպարանք։

բ) Իր դրօշակի տակ բոլորել միմիայն այնպիսի անձանց, որոնք ճիշտ որ բաժանում են կուսակցութեան դաւանանքն ու ձգտումները՝ առանց յետին մտքերի, այլ որպէս այսօրւայ և և վաղւան քաղաքացիներ։

Այս վերջինը մանաւանդ շեշտում ենք այն պատճառով, որ մենք վախենում ենք, չլինի թէ կուսակցութիւնը իր մէջ մտցնի բարոյական և քաղաքական արդէն վարկաբեկ զանազան անձանց, որոնք որոշ, վատ, կեղտոտ, անձնական միտումներով են մտնում կուսակցութեան մէջ և այդպիսով կեղտոտում են կուսակցութեան բարոյական պատիւը։

Մենք մեր համոզմունքներով դէմ լինելով Հայկական Դեմօկրատական կուսակցութեան դաւանանքին, միւս կողմից որպէս քաղաքացի կուզենայինք, որ նա լինի ազնիւ, շիտակ և յարգելի մի այնպիսի հակառակորդ, որի հետ, եթէ չենք կարող միանալ քաղաքական այս կամ այն ծրագիրներով, գոնէ հնարաւոր լինէր միանալ այն հարցերում, ուր այդ հայեացքները դեր չեն կատարում։

Մենք ուզում ենք յարգել այդ կուսակցութեանը, միայն թէ, շարքերը մաքուր, անպայման մաքուր, գործողութիւնը շիտակ, միջոցները ազնիւ լինեն։

Եւ նոր կուսակցութիւնը հնարաւորութիւն կունենայ այդպիսին լինելու, եթէ միայն նա չ՚մտածի կարճ ժամանակում ուժեղանալ՝ թւական բազմութեամբ։

Այդպիսի «զօրութեան» և այդ քաղաքականութեան շօշափելի օրինակը մեր աչքի առաջն է…

digitised by A.R.A.R.@

# «ՏԱԼԳԱՆ» ԵՒ «ԵՐԿԻՐԸ»

—

Մեր մամուլի մէջ անցեալ շաբթին մի պօլեմիկայ սկսեց։

Մի վատ, տգեղ, շատ տգեղ պօլեմիկայ։

Սկսեց սօցիալդեմօկրատ «Տալգան»․ շարունակեց դաշնակցական «Երկիրը»։ Եւ կուսակցական կուրութիւնը, նեղսրտութիւնն ու նախանձը այդ երկուսին գործել տուեցին մի ցածր գործ, գրեթէ մի մատնութիւն։ Մատնութիւն ազատագրական շարժման դէմ։

Ահա գործի էութիւնը։

Սօցիալ-դեմօկրատ վրացերէն լեզւով լոյս տեսնող «Տալգան», տեսնելով թէ ինչպէս «Դաշնակցութիւնը» Պետական Դումայի առթիւ բացուած ընտրական պայքարի մէջ է մտել և իրեն լուրջ հակառակորդ է ներկայանում, յարձակւեց Դաշնակցութեան վրայ և մեղադրեց նրան։

Ի՞նչ բանում։

Այն բանում, որ Դաշնակցութիւնը առանց դասակարգերի խտրութեան հրաւիրում, յորդորում էր Թիֆլիզում ապրող բոլոր հայերին՝ օգտուել ընտրական իրաւունքներից։

Դաշնակցութիւնը կատարում էր այս դէպքում մի լաւ դեր։

Նա հայ քաղաքացուն յորդորում էր թողնել իր իներտ, անտարբեր վերաբերմունքը։ Ուրիշ խօսքով, իր այդ վարմունքով Դաշնակցութիւնը ցանկանում էր հնար եղածին չափ հայ քաղաքացիներին հնարաւորութիւն տալ մասնակցելու այս ընտրութիւններին՝ այն սահմանների մէջ, որը երկաթէ ձեռքերով շրջապծել է ռուս կառավարութիւնը։ Դրանով Դաշնակցութիւնը ամենաթոյլ չափերով ձգտում էր իրագործել ընդհանուր ընտրական լոզունգը, այնքան որքան այդ կարելի և հնարաւոր է։ Եթէ նոյն բանը անէին սօցիալ դեմօկրատները, եթէ նրանք մտնէին վրացիների մէջ և յորդորէին բոլոր վրացիներին մասնակցել որպէս քաղաքացի այս ընտրութիւններին—մենք կծափահարէինք սօցիալ-դեմօկրատներին։

Եթէ այդ բանը անէին մեր քնած, ծանրաշարժ կադէտները, մենք կուրախանայինք, կգովէինք այդ։

Սակայն, ըստ «Տալգայի» բարբաջանքների այսօր այդ քայլը արել է Դաշնակցութիւնը։

Եւ «Տալգան» բարկացել է,

Ի՞նչու, ինչ իրաւունքով։

Մեզ հասկանալի կլինէր «Տալգայի» բարկութիւնը, եթէ Դաշնակցութիւնը իր շնորհիւ իներտութիւնից դուրս եկած ընտրողներին—ստիպէր, կամ պայման դնէր, որ նրանք անպայման ձայն տային միմիայն դաշնակցականին։

Բայց այդ բանը չկար։

Մտաւ ինձ մօտ մի այդպիսի դաշնակցական։

Ի՞նչ էր ասում նա։

Նա հրաւիրում էր ինձ և մեր բակում ապրող բոլոր ցենզ և բնակարան ունեցողներին շտապել մինչև Նոյեմբեր 12-ը խնդիր տալ և ընտրական ցուցակի մէջ մտցնել իր անունը։

Եկողը մտնում էր և հարուստ տան տիրոջս մօտ և նրա դւօրնիկի մօտ և այլ բնակարանատէրերի մօտ։

—Գրուեցէք, ձեր անունը մտցրէք ցուցակների մէջ—ահա ինչ էր ասում դաշնակցական ագիտատորը։

Ուրիշ ոչինչ։

Եւ ես գովում էի այդ եռանդը, այդ խթանը, որը այսօր իր ձեռքն էր առել հայ ազգաբնակութեան վերաբերմամբ հայ դաշնակցութիւնը։

Դրա համար ես յայտնում եմ նրան իմ շնորհակալիքը․ նրան ես ծափահարում եմ։

Իսկ «Տալգայի» մեղադրանքները համարում վերին աստիճանի տգեղ անարդար և փնասակար նոյն իսկ հակայեղափոխական, հակաազատագրական մի քայլ, որովհետև իր մեղադրանքով նա պարսաւում է ընդհանուր ձայնատուութեան սկզբունքի իրագործումը նոյն իսկ այն չափով, որքան այդ հնարաւոր է իրաւունքի այն ողորմելի փշրանքներով, որ շնորհել է մեզ կառավարութիւնը։

«Տալգան» դաւաճանում է իր պահանջին, իր կոչին՝ «Քաղաքացիներ, օգտուեցէք Ձեր իրաւունքներից»։

Եւ դա արդիւնք է այն կոպիտ և կոյր կուսակցական ոգուն, որ ցոյց է տալիս ներկայ ընտրական պայքարում նա դէպի այլ կուսակցութիւնների, ներկայ դէպքում, անմեղ պրօպագանդիստները։

Բայց Դաշնակցութիւնը գործելով ընտրական

digitised by A.R.A.R.@

այդ համակրելի գործը, մի քանի օրից յետոյ նոյն կուսակցական ներսրտութիւնից մղուած, գործեց մի վերին աստիճանի տգեղ քայլ։

Դա այն անտեղի, անիմաստ մերկացումներն են «Երկրի» էջերում՝ «Կեղծիքները բացւում են» վերնագրով, որ նա տպեց իր մի շարք յօդուածներում։ Նա եկաւ կառավարութեան առաջ մերկացնելու թէ ինչպէս Թիֆլիզի իրաւազուրկ պրոլետարեատի պաշտպան մի կուսակցութիւն, որպիսին Սօցիալ-դեմօկրատեան է, անցեալ տարւայ ընտրութիւնների ժամանակ հնարաւորութիւն է ունել՝ կառավարութեան շնորհիւ իրաւունքներից զրկւած իր անդամներին, օգտւել ձայնի իրաւունքից. քաղաքացու իրաւունքներից, այն իրաւունքներից, որից մեզ բրտաբէն և միտումաւոր կերպով զրկել էր երէկ և զրկում է այսօր կառավարութիւնը իր հազար ու մի տեսակ պայմաններով, խոչնդոտներով, գործարանային որոշ թւի բանւորներին (50 հոգի) ձայնի իրաւունք տալով։

Այդ մերկացումները իր տեսակի գաւաճանութիւն է և կուսակցական-կուրութիւնից առաջացած մատնութիւն։

Միթէ իր քայլի այդ վատ, տգեղ լինելը չհասկացաւ «Երկիրը»՝ կուրացած կոյր «Տալղայի» փառասակար և ցած յարձակումներից,

Ահա ինչ կնշանակէ կուսակցական միտումներով մթնացած, գործիք դառնալ այն կառավարութեանը, որի դէմ այսօր կռիւ են մղում այդ երկու կուսակցութիւնները։

Ահա թէ ինչու, եթէ մենք երէկ ծափահարում էինք Դաշնակցութեանը նրա այն քայլի համար, որով նա հրաւիրում էր հայ քաղաքացիներին մասնակցել ընտրութիւններին, այսօր, կարդալով «Երկրի» «Կեղծիքները բացւում են» մերկացումները (?!), մենք սրտանց ցաւում ենք և յայտնում նրան մեր անկեղծ զայրոյթը։ *)

«Տալղան» սկսեց, «Երկիրը» շարունակեց։

---

*) Եթէ կարիք լինի, մենք կապացուցենք, որ անցեալ տարի Սօցիալ-դեմօկրատները օգտւել են ոչ թէ Թիֆլիզում գոյութիւն չունեցող մի ընտրողի ձայնից, այլ մի քաղաքամասում գոյութիւն չունեցող, բայց մի ուրիշ քաղաքամասում իրօք ապրող, բայց ձայնից զրկւած մի բանւորի ձայնից, ուրեմն և այն, որ «Երկրի» մերկացումները զուտ ձեւական մերկացումներ են և զուրկ բարոյական հիմքից։

Ծանօթ. յօդւած.

Երկու միմեանց արժանի հակառակորդներ, կոյր հակառակորդներ։

Իսկ նա, որին իրօք հարկաւոր են այդ մերկացումները, նա դիւային ժպտով, ինքնաբաւական ասում է՝

— Ապրէք, մերկացրէք, պարզէք, մատնէք միմեանց. դա ինձ ձեռնտու է. դա մտնում է իմ հաշիւների մէջ...

ԶԱՆԳԱԿ

## ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Անցեալ ուսումնական տարւայ ընթացքում, երբ վերաբացւեցին մեր փակւած և խլւած դպրոցները, մեր գաւառում սկսեց շարժւել 10 տարիներից վեր քնած, թմրացած գաւառական կեանքը։ Նրա մէջ մտաւ այդ տարրը, որը միշտ էլ ներգործական դեր է կատարել մեր հասարակական բոլոր գործերի մէջ՝ հայ ուսուցչութիւնը։

Մի կողմից Ռուսական մեծ յեղափոխութեան շարժումներից ցրւած, միւս կողմից մեր կեանքում գործող այս կամ այն համախմբումների, հայ ուսուցչութիւնը, բնականաբար, պէտք է դուրս գար հանդիսատեսի և չինովնիկի դրութիւնից։

Նա ապրում էր համայն Ռուսաստանի կեանքով՝ որպէս քաղաքացի և տեղական կեանքով—որպէս հայ մարդ։

Եւ ահա մենք տեսնում ենք, թէ ինչպէս այս կամ այն գաւառական քաղաքներում որպէս Ղարս, Ախալցխա, Աքալքալակ, Բաթում և այլն ուսուցչութիւնը ամենաջերմ և եռանդուն մասնակցութիւն է ընդունում տեղական բոլոր հարցերում, ցանկանալով շարժել այն իներտ, լճացած կեանքը, որը ստեղծւել էր տասնեակ տարիների ընթացքում՝ շնորհիւ մի կողմից համայն պետական երկաթի ռեժիմի և միւս կողմից՝ հասարակութեան քարացած համոզմունքների, իներտ վերաբերմունքի դէպի իր ներկան և մանաւանդ ապագան։

Ճիշտ է, շատ քաղաքներում ուսուցչութեան գործունէութիւնը դուրս եկաւ թոյլատրելի սահմաններից, նա շեղւեց բուն դպրոցական գործից և աւելի երևան եկաւ որպէս քաղաքացի, քան ուսուցիչ, մանկավարժ, բայց այդ շեղումը շատ բնական էր. նա արդիւնք էր համայն Ռուսիայի

digitised by A.R.A.R.@

ներքին կեանքին։

Շնորհիւ այդ գործունէութեան հասարակութեան մէջ ստեղծուեցին որոշ կուսակցութիւններ՝ համակրողների և հակակրողների, կեանքը ալեկոծուեց, կրքերը հրապարակ եկան իրենց ողջ ուժով և միակողմանիութեամբ և բանը այնտեղ հասաւ, որ, երբ տարին վերջացաւ, ծնողները տեսան որ դպրոցի մէջ, երեխաների համար ոչինչ չէ արուել, իսկ եթէ արուել էլ է, շատ չնչին և ահա սկսեցին ընկնել մի ուրիշ ծայրայեղութեան մէջ։

—Կուսակցական ուսուցիչ չենք ուզում, պոռացին հոգաբարձուները.

Նոյնը կրկնեցին ծնողները։

Դա մի ռէակցիայ էր. Եւ ահա ուսումնական տարւայ համար հրաւիրում են նոր մարդիկ և մեծ մասամբ շեշտւում է, որ եկողը լինի անկուսակցական, իսկ եղածներին՝ շտապեցին հեռացնել դպրոցներից։

Իրաւացի էին արդեօք հոգաբարձուները, ծնողները։

Ոչ, նրանք իրաւացի չէին, որովհետև դա ինքը կեանքն էր, որ երբեմն, նոյն իսկ հակառակ ուսուցչի ցանկութեան, գալիս և ներս էր խուժում դպրոցի դռներից և քարշ էր տալիս, երբեմն հրապուրում էր երիտասարդ, տպաւորւող նոր հայ քաղաքացուն։

Այդ երևոյթը յատուկ չէր հայկական դպրոցներին, նոյն և աւելի վատ գրութեան մէջ էր ուսումնարանական գործը ողջ պետութեան մէջ, սկսած գիմնազիկյ դպրոցներից՝ մինչև բարձրագոյն դպրոցները։

Ազատագրութիւնը և յեղափոխութիւնը ուժեղ հեղեղի նման գալիս էր և իր հետ տանում էր ամեն ինչ, որ գտնում էր ճանապարհին. իսկ դպրոցը նրա ճանապարհին էր ընկած և հեղեղը բնականաբար մտաւ և դպրոց, տարաւ իրեն հետ ուսուցչին էլ, աշակերտին էլ, ծնողին էլ։

Այժմ մեծ մասամբ հրաւիրուած են անկուսակցական ուսուցիչներ։

Բայց մենք չենք հաւատում, մենք չենք հաւատում, որ այսօր գոյութիւն ունենան [illegible], անկուսակցական ուսուցիչներ, և եթէ այդպիսիներ կան—դրանք մի մի հրէշներ են, այլանդակութիւններ, հետևապէս չարիքներ և՛ դպրոցի և՛ հասարակութեան համար։

Երբ կեանքը կմտնի իր բնական ընթացքի մէջ, երբ կ՚իրականանան ժողովրդական պահանջները, այսօրւայ գոռոզ պահանջները, երբ հնարաւոր կդառնայ ազատ քաղաքացու ազատ իրաւունքները, այդ ժամանակ ինքն ըստ ինքեան կ՚խաղաղուի ողջ կեանքը և նրա հետ նաև դպրոցն ու նրա սպասաւոր՝ ուսուցիչը։ Այդ շրջանում ահա կ՚սկսուի բուն շինարարական գործունէութիւնը—որի հետ և մանկավարժութիւնը։

Իսկ քանի որ կեանքը շարունակում է եռալ, քանի կռիւը, մեծ կռիւը առաջ է գնում իր հուժկու թափով, մի՛ փնտռէք խաղաղ, հանգիստ ուսուցչին և, եթէ գտնէք էլ, դուրս վանէք նրան—նա դիակ է, իսկ դիակներին չի կարելի յանձնել այն անմեղ, քնքոյշ էակին, որը կոչւում է դպրոցական հասակի երեխայ։

Թո՛ղ մրրկի կեանքը և նրա հետ ուսուցիչը՝ որպէս շինարար և զինուոր։ Դրա վնասը երևոյթական է, իսկ դրա օգուտը մեծ։

Քաղաքայիններն են կռւում, մինիստրները պայքարում, խաղաղ, բթացած հոգևորականը շարժւում—մի՞թէ կարող է ուսուցիչ քաղաքացին անտարբեր մնալ։

Մի մեղադրէք նրան։

ՄԱՃԿԱԼ

# ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Վերջերս հայ գրական անդաստանում, որպէս իրերի տրամաբանական հետևանք ծլեց, նաև այն, ինչ վաղո՛ւց սպասելի էր։

Մեր խօսքը «Երկրի Ձայնը» շաբաթաթերթի մասին է, որ արդէն իր 7 № №-ը լոյս է ընծայել և որի մասին սակայն, մենք մինչև այժմ սպասողական դիրք բռնեցինք, որպէս զի կարողանանք լաւ ևս գիտակցել, վերլուծել նրա գաղափարներն ու համապատասխան տակտիկան։

Ու այսօր, մենք ևս մեր կարգին կըգանք ասելու մեր կարծիքը նրա մասին։

Ո՞ւմ յայտնի չէ, որ Ռուսաստանի Մեծ յեղափոխական շարժումներն վեր իվայր արեցին, յեղաշրջեցին շատ բան ընդհանրապէս ռուսական, իսկ մասնաւորապէս հայկական իրականութեան մէջ։

Ո՞ւմ յայտնի չէ, որ դրանից հազիւ 1—2 տարի առաջ, երկրագնդի վրայ գտնուած ողջ հայութեան քաղաքական իղձերի առանցքը Տաճկահայաստանն էր կազմում, և որի ազատութեան ու անկախութեան մէջն էր մէն մի հայ, լինի բուրժուա թէ բանուոր, լինի ազնուական թէ կղերական, իւր սեփական բարօրու-

թիւնն և ազգային ամբողջութիւնն ու ապագան ապահովելու միակ միջոցը ճանաչում։

Այո, Տաճկահայաստանը ազատ, անկախ, համայն հայութեան միակ իղձն էր և այսօր իսկ կան շատ շատեր, որոնք այդ երազով, այդ ուտոպիայով են օրօրում իրանց։

Սակայն այս 1—2 տարիները, շնորհիւ Ռուսական Մեծ Յեղափոխութեան անողոք իրականութեանը, եկան շատ մութ բաները պարզելու, տասնեակ տարիների ընթացքում փայփայած մտքերը արխիւ գցելու ու մինչև իսկ կարծեցեալ սրբութիւններն ջարդ ու փշուր անելու։

Տաճկահայերի ազգային անկախութիւնը, ազատ Հայաստանը, համայն հայութեան սրբութեան խորանն էր՝ որին այսօր, ձեռք տուեց «Երկրի Ձայնը»։

«Երկրի Ձայնը» նոր բան չասեց, բայց ասածը անպայման ճիշտ էր, նա կանգ չառաւ ընդունուած, ժողովրդականացած լոզունգների վրայ, այլ ընդհակառակն նա դէմ գնաց «սրբութեան խորանին» ասելով՝

«Մենք վճռապէս դէմ ենք ազգային առանձին յեղափոխութեան, առանձին շարժումների» (Երկ. Ձ. № 1)։

Եւ իր այս եզրակացութեան հիմքերը այսպէս ձևակերպեց.

«Մենք նոյն բռնակալութեան թաթի տակ ենք խոնարհել մեր գլուխը, նոյն ցաւի, նոյն դըժբախտութեան արցունքն ենք լաց լինում։

Մի այլ տեղ նա ասում է.

«Ինչպէս որ հայ ժողովուրդը Ռուսաստանում և Պարսկաստանում իր բաղդը չէ անջատում, չէ խորհում անջատել նոյն երկրներում ապրող միւս ժողովուրդների բաղդից, նոյնպէս էլ Թիւրքահայը չպիտի բաժանէ իր ազատագրութեան դատը այն ժողովրդի դատից, որոնց հետ անքակտելիօրէն կապուած՝ կրում է միևնոյն բռնակալութեան հրէշաւոր լուծը։

Հետևաբար մենք ընդունում ենք միմիայն մի դատ, Թիւրքիայում—ընդհանուր յեղափոխութեան դատը»։

Այսպէս «Երկրի Ձայնը» իր առաջին իսկ համարի ճակատին դնելով իր դաւանանքը, չըմոռացաւ մտրակել տասնեակ տարիների այն քաղցր օրօրը՝ որ «քրիստոնեայ ու քաղաքակիրթ» Եւրոպա, Եւրոպական դիպլոմատիա, Մեծ պետութիւններ և այլն անուան տակ՝ օրօրում էր մասնաւորապէս Թիւրքահային, իսկ ընդհանրապէս բոլոր հայերին և առաջացնում ապագայի, միշտ ապագայի նկատմամբ՝ կարմիր, կանաչ յոյսեր, յոյսեր և միայն յոյսեր։

Նոր օրգանը փաստօրէն ցոյց է տալիս դիպլոմատիա կոչուած հրէշի դիւային, հրէշային ցանկութիւններն ու անձնական, եսական շահերը, և հրաւիրում ոչ մի յոյս չդնել զանազան դաշնագիրների, ու այլ անունների տակ ծածկուած վտանգաւոր հրէշի վրայ.

«Եւրոպան, որի միջամտութեան պիղծ քաւարանի վրայ ողջակէզ ենք բերել մեր լաւագոյն յոյսերն ու լաւագոյն զաւակները, Եւրոպան, որի պատճառով վիհ է բացել մեր և միևնոյն հողը իր արիւն-քրտինքով արգասաւորող ժողովրդի միջև, ոչ թէ իրաւունքի ու ազատութեան մի ասպետ է, այլ մի վիթխարի Շէյլօկ, որ երկրպագում է միևնոյն շահին ու տոկոսին, որ ծառայում է ամենից աւելի վճարողին»։

Եւ այսօր «Երկրի ձայնը» հրապարակ գնելով այս մերկ, անողոք անցեալ իրականութիւնը, քաջարի ըմբոստացումով, աւելացնում է.

«Մենք խաբուել ենք անցեալում։

Գոնէ խոստովանելու քաջութիւն ունենանք։

Ձընկնենք նոյն սխալի մէջ, չօրօրուենք պատրանքի նոյն մահացու երգերով»։

Եւ այս բոլորից յետոյ նա իր ասածները եզրափակում է այսպէս.

«Այն անօրինակ ռէժիմը, որի տակ հեծեծում է և՛ հայը, և թուրքը, և՛ քիւրդը, և՛ ասորին, և՛ դիւրզին, և յոյնը, և՛ հրէան, և՛ արաբը, և՛ ալբանացին, և՛ մակեդոնացին,—պէտք է տապալուի անխտիր նոյն ցեղերի և նոյն ժողովուրդների միահամուռ գրոհով։

Դա է գաղափարի, ինչպէս և շահի հրամայողական պահանջը»։

Մենք միանգամայն համաձայն լինելով «Երկրի Ձայն»-ի առաջադրած հիմնական տեսակէտի հետ, միաժամանակ չպիտի յապաղէինք հարցնելու, թէ այդ նպատակը՝ այսինքն Թիւրքիայում ընդհանուր յեղափոխութեան դատը իրագործելու համար, կազմակերպական ինչ սիստեմ պէտք է ընդունել, կենտրոնացման թէ ապակենտրոնացման, ազգայի՞ն թէ միջազգային, այլ խօսքով մի եւ միացեալ ընդհ. կուս. միևնոյն ծրագրով ու տակտիկայո՞վ՝ թէ ջոկ ջոկ ազգային կուսակցութիւնների համերաշխութեան և այլ պայմաններով կապուած։

Այս հարցերի պատասխանը մենք կըյուսայինք տեսնել «Երկրի Ձայն»-ի յետագայ համարներում, բայց դժբաղդաբար ցարդ այդ մասին խօսք չեղաւ։ Այնուամենայնիւ մեր կողմից շնորհաւորելով «Երկրի Ձայն»-ի երևան գալը՝

Մենք կըսպասենք, միանգամայն հաւատացած, որ այս կարդինալ հարցերն էլ «Երկրի Ձայն»-ի խմբագրութեան կողմից հարկ եղած ուշադրութեան կառնէն։

# ԳԱՒԱՌ

## ԳԻՒՂԱՑՈՒ ՀՈԳՍԵՐԸ

—

Նոր-Բայազետ նոյեմ. 17-ին

Մեր կողմերի գիւղացիները կեանքի այնպիսի աննպաստ պայմաններում են գտնւում, որ նրանցից շատերը բոլորովին զուրկ են ընտանեկան զանազան

digitised by A.R.A.R.@

միջոցներից. նոյն իսկ օրական պարէնը նրանց պակասում է։ Վերջին տարիների հողի անարդիւնաւորութիւնը, բնական աղէտները, հայ-թուրքական յարաբերութիւնները, գործերի սպառումը, պարտքերի աճումը, ինքնապաշտպանութեան կարիքները, դրամական միջոցների սղութիւնը, արտաքին հանգամանքների ճնշումը և այլ այսպիսի հանգամանքները այն աստիճան քայքայեցին գիւղական ժողովրդի տնտեսութիւնը, որ տասնեակ տարիներ են հարկաւոր կամ արտաքոյ կարգի միջոցներ, որպէս զի կարողանան իրանց պակասը լրացնել, քայքայուած տնտեսութիւնը դրստել—վերականգնել։ Սակայն դիւթական դաւազանով չէ կարելի ընկածին կանգնեցնել, հարկաւոր են զօրեղ միջոցներ, անմիջական օգնութիւն, որպէս զի չքաւոր գիւղացու խեղճը գլխին գայ և իր կարիքները հոգայ, վերականգնի...

Մենք ծանօթ ենք շատ գիւղացիների, որոնք ոչ մի կանոնաւոր շինութիւն անգամ չունեն ապրելու համար, այլ ունեն մի «հացատուն», որը ծառայում է իբրև բնակարան թէ իրանց և թէ անասունների համար։ Այդտեղ նրանք և՛ հաց են թխում, և՛ կերակուր եփում, և՛ քնում, և՛ իրանց անասունները կապում խնամում։ Գիտենք նաև շատերին, որոնց կարիքները թւել չի լինի, ծով է նրանց դարդերը...

Այո, գիւղացու հոգսերը վերջ չունեն.—ահա ձեզ մի ընտանիք, որ ունի բազմաթիւ անդամներ, 3—4 հասակ առած ամուսնացած տղամարդիկ, որոնցից իւրաքանչիւրը 2—5 երեխաներ ունի, մէկը նոյն իսկ թոռներ ունի, մի խօսքով 20-25 հոգուց բաղկացած ընտանիք։ Նա տարիներով ապրում էր շատ ապահով. գիւղում հարուստ, մեծատան համբաւ ունէր, լաւ բարեկամների տէր, հիւրասէր։ Մի խօսքով՝ «մեծ օջախի տէր» հռչակուած իր շրջանում։ Իսկ այժմ.—այժմ դրանցից և ոչ մինը։ Տարիների աննպաստ հոսանքներն այդ բարեկարգ ընտանիքին գրեթէ սովի դուռը հասցրին, աղքատացրին, երկպառակութիւն առաջացնելով նոյն իսկ սիրով ապրած հայ-գիւղացու եղբայրների և ընտանիքի շրջանում և ընդհանուր դժգոհութիւն առաջ բերելով այդ գիւղական տան մէջ, նախկին բարեկարգ օջախում...

Եւ ահա այդպիսի դէպքերում՝ անխուսափելի է գեղջկական տան բաժանութիւնը... Հոգսերը էլ աւելի առաջ են գալիս, աւելի բարդւում։ 3-4 եղբայրներ են, այդքան տուն է հարկաւոր, այդքան բնակարան՝ գոմ, մարագ, հացատուն, սենեակ է պահանջվում. իւրաքանչիւրին եզ, գոմէշ, կով, ձի և այլ լծկաններ ու կթաններ են հարկաւոր՝ առանձին-առանձին շարունակելու իրանց տնտեսութիւնը, իրանց պապական արհեստը—ռանչպարութիւնը... բաժանւում են, սակայն կիսելու ոչինչ չը կայ. բաժանվում են, որովհետև ոչինչ չունեն ուտելու, հագնելու, շինելու, տնտեսելու... բաժանվում են՝ այլ ևս իրանց դժգոհութիւնը միմեանց չը յայտնելու, իրանց սեփական զգացմունքը իրանց սրտի մէջ խեղդելու համար... բաժանւում են, որովհետև բաղդը իրանց հալածում է՝ մի կերպ քաշ տալ իրանց դժբաղդ գոյութիւնը...

Ահա ձեզ հոգսերի աւելի բարդութիւն. բաժանվելով գիւղի ընտանիքը՝ եղբայրներից մինը ապրում է «հացատանը», միւսը՝ մտնում է գոմի մի անկիւնը, որտեղից մի փոքր դուռ է բաց անում դէպի մի այլ կողմ, երրորդը երեխաների հետ կուչ է գալիս «մարագումը», որտեղ մի փոքրիկ թոնիր է հորում վառելու և տաքանալու համար, չորրորդը մտնում է մի գետնափոր, խոնաւ խրճիթում կամ խուղում, որտեղ լոյսը երբէք չէ թափանցում, արևի ճառագայթները մուտք չեն գործում և այլն։ Եւ միթէ մէկն է, երկուսն է դրանց թիւը մեր գիւղերում։ Ոչ, դրանց թիւը տասնեակներով, հարիւրներով են հաշւում մեր գաւառական շրջաններում, որոնց վրայ արժէ իսկապէս լուրջ ուշադրութիւն դարձնել....

Գ. ՍԻՆԱՆԵԱՆՑ։

---

## ԱՅԼԱՍԵՐՈՒՄՆ

Կաղզուան, Նոյեմբերի 14-ին։

Մեզանում հասարակական ամեն մի գործ վայր ի վերայ, անհիմն ու անկանոն է ընթանում և այդ բոլորի միակ պատճառն ու աղբիւրը մէկ է՝ մեր—մանուկ սերնդի ընտանեկան կրթութիւնից զուրկ լինելը, որը՝ ի հարկէ, կրթութեան հիմքն է կազմում։ Կեանքում չկայ մի բան՝ որի հիմքը ամուր չ՚սկսվի և հաստատ լինի. ամենահասարակ խրճիթն անգամ սկսելիս հիմքը ամուր են դնում, մի խօսքով ամեն գործ այդ է պահանջում և այդպէս էլ կատարում ենք, բացի մէկից, որ ամենագլխաւորն է և առաջադիմութեան գլուխ գործոցը։

Մեզանում մանուկ սերնդի կրթութեան հիմք—ընտանեկան դաստիարակութիւն ոչ միայն չկայ, այլ նոյն իսկ վատ ուղղութիւն է ստացել, այլ խօսքով սերունդը կրթելու փոխարէն՝ փչացնում ենք և այնուհետև ամեն բան պահանջում դպրոցից։ Մենք և մանաւանդ մեր կանայք Փարիզի «մօդաների», արթուզարդների մասին աւելի ճիշտ գաղափար ունենք, քան թէ մեր զաւակների դաստիարակութեան մասին, էլ ինչ կարող է մեր սերունդը չփչանալ և հասարակութեան համար չարիք չդառնալ։ Ծնողները բոլորն էլ նկատած կը լինեն, թէ ինչպէս մօր առաջին անգամ արտասանած խօսքը նոր թոթովող երեխան իսկոյն իւրացնում է, այդպէս է նա մեր ամեն մի շարժումի, գործողութեան վերաբերութեամբ, ուրեմն որքան ըզգուշութեամբ, գիտակցութեամբ պէտք է շարժուենք մեր երեխաների մօտ. բայց դժբաղդաբար, երբէք չենք հոգում, մտածում այդ մասին, այլ նրանց ներկայութեամբ սուտ խօսում, խաբում, կեղծում, ծխում, խըմում—հարբում ենք և, երբ մեր զաւակները մեծանում են, և միևնոյն բաները կատարում մենք ծնողներս տըրտնջում, բողոքում ենք՝ առանց ընդունելու, որ մենք

digitised by A.R.A.R.@

ենք այդ բոլորը դաս տվել նրանց, միմիայն մենք։

Մի բնորոշ փաստ պէտք է արձանագրեմ այդ մասին։ Ալեքզարդ մի հայր գանգատւում էր իր որդուց, որ նա շարունակ խմում է ու «խումարը» խաղում, վերջինիս դիմեցի՝ որպէս իմ նախկին աշակերտի՝ խրատելու, սակայն նա խիստ յուզված՝ ասաց, «ինչ ես ասում, վարժապետ ջան, իմ հայրս, որ արդէն ծերացել է, ամեն օր խմում է հապա ես ինչ անեմ...»։ Ես լռեցի այդ դառն իրողութեան դէմ։

Ուրեմն փաստ է, որ առանց հիմնական-ընտանեկան կրթութեան մենք չենք կարող մաքուր և պարտաճանաչ սերունդ ունենալ՝ թէկուզ մեր զաւակներին համալսարան ուղարկենք։ Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ չնայելով այժմ հայերս բաւականին թւով համալսարանաւարտներ ունենք, այնուամենայնիւ մեր ազգային հասարակական բոլոր գործերը վայրիվերոյ են կատարւում, որովհետև այդ համալսարանաւարտների կրթութեան հիմքն էլ անկանոն, վայրիվերոյ է դրվել, նրանք էլ նոյնն են իրանց հայեացքով, տրամադրութեամբ, զգացմունքներով, ինչ որ թերուսներս ենք, սակայն աւելի վտանգաւոր։ Ի հարկէ բացառութիւններ կան։ Այդ է պատճառը, որ մեր ժողովուրդը միշտ երես է շուռ տալիս մեզնից, կրկնելով իր՝ առած դարձած՝ նախադասութիւնը. «Մեր ուսում առածների լաւն էլ չտեսանք»։

Երբ ընտանիքը կրթութեան հաստատ հիմքը չէ դնում, այլ ինչպէս երևաց, դեռ փչացնում է, դպրոցը այլ ևս չի կարող բարոյապէս ուղղել մեր մանուկներին. կարող է միայն ժամանակաւորապէս ազդել, իսկ այդ ազդեցութիւնն էլ շուտով օդն է ցնդում, երբ նրանք մանում են կեանքի դպրոցը, որովհետև այդ դպրոցում կեանքը աւելի քաօսական, անօրմալ է ընթանում ու աւելի փչացնում է մեր մատաղ սերունդը, մինչև անգամ այլասերում։

Մեր կեանքի դպրոցի ղեկավարը՝ երիտասարդութիւնն է, բայց այդ երիտասարդութիւնը ինչ գոյն ունի, ինչ ճանապարհով է ընթանում, ինչ իդէա ունի։ Համարձակօրէն կարելի է ասել՝ ոչինչ կամ շատ չնչին։ Նրա անդամները այսօր այս կուսակցութեան են պատկանում, վաղը՝ մի ուրիշ, այսօր այս գաղափարին են ծառայում, վաղը՝ դաւաճանում, անարգում են այդ գաղափարը, հետևաբար նրանցից ոչ մէկի մէջ չկայ ինքնաբուղխ մղում դէպի սուրբ գործը, այլ ամենքն էլ առաջնորդւում են իրանց ներքին ցած հաշիւներով։

Որ մեր երիտասարդութիւնը զուրկ է մաքուր իդէաից, ինքնաբուղխ գաղափարով չէ առաջնորդւում հասարակական գործերում—անսկզբունք է, կարող է հաստատել մեր յեղափոխութեան կեանքի այսօրուայ իրականութիւնը։ Դաշնակցութիւնը իր ծրագրի համաձայն խմբեր է անցնում Տաճկահայաստան, «Հնչակեան» կուսակցութիւնն էլ սկսեց նոյնը անել, Դաշնակցութիւնը իր ծրագրից դուրս, ժողովրդի համար մի ցեց ու քոր զինւորութիւն ստեղծեց գիւղերում, Հնչակեան կուսակցութիւնն էլ նոյնն արեց, Դաշնակցութիւնը մի այլ աւելի վտանգաւոր քայլ արեց—ժողովրդի դատը իր վրա առաւ, Հնչակեան կուսակցութիւնն էլ նոյնն արաւ։ Մի խօսքով, մեր յեղափոխութիւնը այժմ ոչ թէ իր ծրագրին է ծառայում, այլ ամբոխի տրամադրութեանը։

Ահա թէ ինչ միջավայրում է կրթւում մեր մատաղ սերունդը, մեր ապագայի յոյսը, որը գնալով, բնականաբար, պէտք է այլասերի։

Մ. ՂԱԶԱՐԵԱՆ։

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԳԻՒՂԵՐՈՒՄ։

Մցաւա.

Զափազանց մխիթարական երևոյթ է առհասարակ ներկայացումներն գիւղերում, եթէ միայն այդ դրուած է ուղիղ հիմքերի վրայ. խօսքս կըպատմեմ ներքևում։

Վերջին օրերս Անուխւայում մի խումբ սիրողների ձեռնարկութեամբ տրւեցաւ վրացերէնից թարգմանուած «Արսէն աւազակապետ» պիէսան և «Պատիւը»՝ Ղարիբի պատկերներից։ Ներկայացումը անցաւ բաւական յաջող. համարեա բոլոր դերակատարները կարողացան յաջողութեամբ տանել իրենց դերը։ Սրահը լիքն էր հասարակութեամբ, անշուշտ այստեղ ընթերցողը հասարակութիւն բառի տակ գիւղացիներ կը հասկանայ, բայց իզուր։

Հէնց ցաւալին էլ այն է, որ գիւղում տրուած ներկայացմանը հանդիսատես էին ոչ թէ գիւղացիք, այլ քաղաքացիներ, որոնք եկել էին Սուխումից և Գուդաուտից։ Բայց հարց է, միթէ գիւղացին չի ցանկանում թատրոն յաճախել, գոնէ, եթէ ոչ լիովին հասկանալով թատրոնի իսկական նշանակութիւնը, գէթ հետաքրքրուելու թէ՝ ինչ է կատարւում թատրոն ասուած տեղում։ Անշուշտ նա կը ցանկանար, չէ՞ որ նա ամբողջ օրեր աչքի առաջ տեսնում էր, թէ ինչպէս մի ինչ որ եռանդով մի խումբ երիտասարդներ ներկայացման պատրաստութիւն են տեսնում. և գուցէ ինքը ևս յոյս ունէր յաճախելու։ Սակայն այն պարոնները, որոնք ճառում են ժողովրդի շահերի, նրա կրթութեան և յառաջադիմութեան մասին, նոյն այդ պարոնները, գուցէ և անգիտակցաբար, որոշ սահմանափակում էին դրել գիւղացի դասի առաջ։

Առաջին կարգի տոմսը արժէր 2 րուբլի, իսկ վերջինը՝—տաքի վրայ կանգնողներինը, 50 կոպէկ. մի գումար, որ գիւղացին միանգամայն անկարող է մի գիշերուայ մէջ ծախսել։

Ցանկալի կը լինէր, որ ներկայացումները գիւղերում տրւէին ոչ թէ փող վաստակելու նպատակով, այլ ընդհակառակը այնպիսի դիւրութիւններ ,ունենային, որ գիւղացիները առանց տատանուելու օգտուել կարողանային այդպիսի հազուագիւտ դէպքերից։

ԱՐԻՍ։

digitised by A.R.A.R.@

## ԸՆԿԵՐՈՋ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԳԻՒՂԻՑ

### II

Տարիներ շարունակ թանձր խաւարում հատած ժողովրդի աչքերը հանդուրժել չեն կարող հզօր լուսին, նրանք ընտելացել են մթանը, արևի շողերը խոցոտեցնում են, ու զարմանալի չէ, որ նա կռիւ պիտի մղէ լուսի դէմ: Դարերը շարունակ կամազուրկ, անզգայ գիւղը սովորել է շարժել իր եսական վարիչների քմահաճոյքով. միշտ տեսել է նրանց աչքերով. լսել նրանց ականջներով, դատել ու մտածել նրանց խելքով, խօսել նրանց լեզւով. իր լեզուն, անկախ միտքը, անձնական դատողութիւնը մի կողմն են մնացել. ու տարօրինակ չէ, որ ամէն անգամ տարերային թափով ոտքի է կանգնում իր բարերարի դէմ, թշնամի յայտարարում նրան:

Իրերի այդպիսի ընթացքը, գեղջուկի այդօրինակ ըմբռնումը, այդպիսի գնահատութիւնը ինչ են բերում իրենց հետ. այն, որ այնուհետև իւրաքանչիւրը ձգնում է իր պակասաւոր կողմերով գերազանցել բոլորից. քահանան ծածկւած տեսնելով իր սխրագործութիւնները, հրես է առնում ու իր կենցաղով հրէշաւոր դասեր աւանդում. տանուտէրը սիրտ առած, որ նրա արարքը ոչ ոք չի քննում, մորակի ու կնիրի ուժով սկսում է մի անսպառ հունձ իրեն յանձնւած հասարակութեան մէջ. դատաւորը խրախուսւած՝ իր կամայականութիւններին զօռ տալիս. ուժեղն ու հարուստը, բոլորի ատամները համրելով ու կտրոն, սուր ատամ չգտնելով, աստւած յայտարարում իրենց ու ասպարէզ բանում մարդկութեան մէջ մնւած վայրագ յատկութիւններին: Իսկ անյատակ տանջանքի մրուրը քամող գիւղացին տեսնում է այդ ու շարունակում ծածկել, անվերջ լռել: Մէկը լռում է, վախենալով իր հոգեհանի նորանոր դաւերից, միւսը տաղ անում, որպէս զի իր կեանքը մաշող տզրուկների դէմ երբևիցէ լինելիք բողոքների ստուգութեան ժամանակ հանդէս չըգայ ու նրանց դժոխային վրէժխնդրութիւնը չգրգռէ. երրորդը սուս է կենում, որովհետև բարեկամ է ու շահ ունի մէջ տեղ. մի ուրիշը Զաքարիայի պայմանձում պահում գիւղացու հոգին ընտրոշող այն շատ խորհրդաւոր առածին հետևելով՝ թէ՝ ինձ չփչասող օձը հազար տարի թող ապրէ... Այսպէս իւրաքանչիւրը մի պատճառով. ու մէկ-մէկ զոհ են դառնում, մին-մին ընկնում գայլի բերանը, բոլորն էլ տուժում, մէկն այսօր, միւսը վաղը, ու միշտ էլ մենակ մնում, մենակ կուլ գնում:

Ու այդ ամենից յետոյ զարմանալ բոլորը խմբւած, մեծ եռանդով տարիներ շարունակ հոն ծեփում, պոյն են տալիս զարշահոտ գերեզմանի արտաքինին. բոլորն իրենց հասկացողութեամբ, իրենց վերաբերմունքով գիշեր—ցերեկ կառում իրենց տանջանքի շղթաները, ընդօտցնում, բարձրացնում իրենց բանտի պարիսպները...

Գիւղը գիտէ լալ, հառաչել ու խաչ հանել, քարկոծել իր բարերարներին: Իսկ բարերար երբ ունեցաւ նա. ոչ ոք սիրտ չարաւ նրա մտնել այդ ստարոտի աշխարհը ու խօսել, կռւել բաց ճակատ, առանց յետ ընկրկելու. ամէն գիւղ եկող շուտ համակերպւեցաւ, շուտ մի կողմ դրեց իր զէնքերը ու շոյեց նրա ինքասիրութիւնը. սոսկաց այն մեծ կռւից, որ պիտի վարէ մտքեր յեղաշրջելու, նոր կեանք բերելու. սարսափից ամէն րոպէ նրան բզիկ-բզիկ անելու պատրաստ ատամներից, լողաց նրա գլխին իջնելու համար սեղմւած բռունցքներից. ոչ մէկը ուզեց առաջին զոհը լինել, զրկանքներ տանել, տանջւել ու մինչև յետին շունչ իր կռւին անել. ոչ որ կամեցաւ դէմ գնալ գիւղական սղաթներին. եկողն ինքն էլ սորվեց ստել, կեղծել, զրկել, ծծել ու վարպետօրէն ծածկել...

Ու կշարունակի գիւղն ընկնել, օրէ ցօր աւելի ու աւելի իջնել ցած, ծածկել ու խնամել իր ներսն ապականող որդերին, անդուլ կարկատել խաւարի համատարած վարագոյրը, քանի փակ է նրա լեզուն, կապ են նրա ձեռները, քանի տգիտութիւնը կյարատէ այնտեղ իր բոլոր սարսափներով ու անվերջ կստեղծէ փակբերան մարդկանց բազմութիւն. այսպէս մինչև այն օրը, երբ ժողովրդի իսկական բարեկամը կգայ սիրտը նւէր բերելու իր սիրած մեծ զոհին ու նրա համար շնչելու. երբ կգայ հարազատ զաւակը հայրենի վէրքը սրտում ու առանց հաճոյանալու ճիգերի, առանց գեղջուկի բերնով փառաբանւելու ձգտումի կռիւ մղէ, հսկայ կռիւ բիրտ, վայրենի հակումերի դէմ, կռիւը դարերով սովորութիւն դարձած, առածներով հաստատութիւն գտած ըմբռնումների դէմ. լռիկ—մնջիկ, գլուխը կախ վերահաս դանակը ձեռին, կկտրի կհանի ներխւած խոցը ու սպեղանի կդնի, առանց ականջ անելու նրա ձայնին առանց սոսկալու նրա անէծքից. երբ գիւղ կվազէ անձնւէր գործիչը իր սեփական օրինակով, ամենօրեայ դրուցներով, հանրօգուտ գործերով. սերունդ կրթելով փակ աչքեր բանալու, շղթայւած ձեռներ ազատելու ու վերստեղծած ուժերով վանելու ապտարուն գորտերին, չորցնելու մահաշունչ ճահիճը...

Ու հէնց որ լեզուն բան ընկաւ ու կաշկանդւած ձեռների շղթաները խորտակւեցան, հէնց որ դադարեց ուրիշի խելքով մտածել ու դատել և ճանաչեց իր չարն ու բարին, սովորեց իր շահերը պաշտպանելու զէնքերը ձեռք բերել ու այն՝ վարժ գործադրել,—երկար տարիների զոհը ոտքի կկանգնէ դարերի մրափից, կշարժւի, կելնէ խաւարի իշխանութիւնից ու նոր միայն կսկսի իր իսկական կեանքը...

Ու այն օրը կդադարեն լացն ու հառաչը, ու գիւղի բարերարը նոր միայն հանդէս կգայ իր վեհութեամբ ոչ խաչափայտի վրայ գամւած կամ քարաշեղջի տակ թաղւած, այլ գիւղացու տանջւած սրտում, նրա կոպիտ, բայց անկեղծ ստեղծագործութեան մէջ, նրա պարզ, անպաճոյճ աղօթքներում...

Այդ՝ լուսի յաղթանակի օրը կլինի:

Մինչ այդ գրիչս առած մտնեմ իմ Լծարուն աշխարհը, այնտեղ, ուր թունաւոր մթնոլորտը հրէշներ է ծնում այլանդակելու գիւղերը, ուր չարքաշ գեղջուկը

գիշեր ցերեկ արած քրտինք, գիտէ ծովերով, տքնել սարերով, լալ գետերով ու տալ, շարունակ տալ ազնուութեան տուրք, միշտ քաղցած, միշտ մերկ, լեզուն փակ, ձեռքը կարճ. ուր ազնուութիւնը քար է ուտել, կրակ գեղջուկի ձեռքը՝ քարով փայտ կտրելու, տանջանքով մի կտոր կորեկ հաց վաստակելու. ուր անծէր մթութեան մէջ քայլել է անվերջ թշուառ գիւղացին անառաջնորդ, անկարեկիր, անթիւ տարիներ, հեծել ծանր բեռան տակ, կծկուել, կուչ եկել, ապրուստից ընկել, հայից զրկուել, ազգասիրութեան շէմքին վիզը ծուռ կանգնել մնացել...

Այդտեղից պիտի գրեմ։

Շուտով չսրտահատես, երես դարձնես, ընկեր, եթէ տեսնես իմ գրիչը արցունքում է թաթախուած ու մռայլ, յուսահատ տողեր է շարում կամ «վշտի ծխծաղը» հրհրում։ Ես չեմ խօսել, երկար տարիների անլեզու գիւղը կխօսէ հազար—հազար ձևերով. ես միայն կոչնակ եմ ու իմ պարտքը պիտի կատարեմ։

ԱՐՓԱՅԻԿ.

---

## ԿԻՐԱԿՈՍԸ ԵՒ ՄԱՐԿՈՍԸ.

—

*(գաւառական տիպեր)*

II

Երկրորդ երեկոյեան Մարկոսը մտաւ իր տուն ու յանկարծ սկսեց համբուրել իր զաւակներին սովորականից աւելի՝ կնոջը ձեռը սեղմեց և մի առանձին բաւականութեամբ սկսեց հարց ու փորձ անել կնոջից օրուայ անցածների մասին։ Այս երեկոյեան նկատւում էր, որ Մարկոսը չի ցանկանում, որ զաւակները շուտ քնեն, ինքն էլ շատ ուշ գնաց Կիրակոսի մօտ։

Կիրակոսը ամեն բան վերջացրել էր և անհամբեր սպասում էր ընկերոջը։

—Խե՞ր լինի, Մարկոս ջան, ինչու այսօր այդպէս ուշ եկար, երևի օրուայ լսածդ կամ տեսածդ այնքան աննշան բաներ են, որ չ'ուզեցար նոյն իսկ պատմել։

—Ոչ, ընդհակառակը, միջամտեց Մարկոսը, այսօր աւելի քան հետաքրքիր է իմ տեսածն և լսածը.

—Դէհ, սկսիր, էլ մի ուշացրու, մօտ է քնելու ժամանակը։

Մարկոսը նստեց Կիրակոսի աջ կողմը ու սկսեց իր պատմութիւնը.

—Այսօր եկել էր մեզ մօտ Տէր Սուքիասանց Գրիշը հարցնելու, ժամանակ ունի՞մ իրանց քանդուած խանութը շինելու. Նա մի քիչ նստեց մեզ մօտ և խօսում էր դէսից դէնից. Յանկարծ ֆայտոնի մէջ նստած հրահրալով անցաւ պ. Փիլիպպոսի կինը՝ Տէր Դելանց փչացած Միքի հետ, ես դարձայ Գրիշին և հարցրեցի, թէ զարմանում եմ, պ. Փիլիպոսը ինքը բաւականին լուրջ մարդ է և իր գործով զբաղուած, ինչպէս է նա ապրում այս խայտառակ կնոջ հետ։ Առաւօտից սկսած մինչև գիշերուայ կէսը այս կնոջ գործը դա է, որ քաղաքի լոթիների հետ ընկերանալով ման է գալիս։ Չէ եղբայր, իմ կարծիքով, քիչ թէ շատ պատիւ ունեցող մարդը այդ բանը երբէք թոյլ պիտի չ'տայ։

Այդ ժամանակ Գրիշի գլուխը տարաւ—բերաւ և դառնալով դէպի ինձ, ասաց։

—Գիտե՞ս ինչ. Մարկոս եղբայր, ես տեսնում եմ, որ թէկուզ դու բաւականին ընթերցասէր ու հասկացող մարդ ես, բայց ընտանեկան յարաբերութիւնների մասին գաղափար չունես և բոլորին չափում ես քո արշինով։ Այնր այլ բան է մեր ընտանիքը, այլ բան է այդ բարձր դասակարգի իրանց ազատամիտ անուանող պարոնների ընտանեկան յարաբերութիւնները, եթէ միայն նրանց ընտանիք կարելի է անուանել։ Չ'գիտեմ, Մարկոս եղբայր, որտեղից ես իմացել, որ պ. Փիլիպոսը լուրջ մարդ է. Դու դեռ չ'գիտես թէ երեկոյեան ժամը ութից յետոյ նա ինչով է զբաղուած. Դու երևի չես էլ լսել այսպէս կոչուած լպստածների կրուժոկը, որ ամեն երեկոյ սկսում է իր գործունէութիւնը այս կամ այն անդամի տանը։

Կրուժոկի անդամներն են Թոսունենց Սերոժը և իր կինը, Ռուսաստանից բերածը. Սանդրունց Սիմոնը և իր հետ բերած երկու ֆրանցուժենկաները. Խաչիկը և իր այրի քոյրը, որ անցեալ տարի այն թոկը կրտրածի հետ փախաւ և մի ամիս գիւղերում ապրելուց յետոյ, դարձեալ վերադարձաւ տուն և քո լուրջ Փիլիպպոսն ու իր կինը՝ այսօրուայ հերոսուհին։

—Կրուժոկի նախագահն է քո գոված Փիլիպպոսը։ Գիտես՝ ինչն է այդ կրուժոկի երեկոյեան պարապմունքները. Հաւաքուելով այս կամ այն անդամի տանը, նրանք միանգամից մոռանում են իրանց մարդկային զգացմունքները, իրանց մատնում են գեխութեան։ Այդտեղ չ'կայ ոչ պատուասիրութիւն, ոչ ընտանիք, ոչ լրջութիւն և ոչ էլ սեփականութիւն։ Այդ մարդկային պարագլուխները այստեղ վարժւում են սիրահարութիւնների, փաղաքշանքների, կոմպլիմենտների մէջ ու մրցում իրար հետ. կանայք աւելի և աւելի կուալերներ գրաւելով, իսկ տղամարդիկ՝ իրանց առ երես պաշտող քնքոյշ էակներ...

Ես էլ, Կիրակոս ջան, չ'կարողացայ համբերել, խնդրեցի Գրիշին վերջ տայ այդ պատմութեանը, անիծելով այդ մոմենտը, երբ սխալմամբ Գրիշին հարց տւի պ. Փիլիպպոսի մասին. Ջանս սարսուռ է ընկնում, երբ լսում եմ այդպիսի բաներ. մենք, Կիրակոս ջան, պիտի մի կտոր հաց ուտենք, իսկ միւս կտորը նուիրենք Աստծուն, որ մեզ զրկել է հնարաւորութիւնից այդ փչացած դասակարգին պատկանելու. Դէհ, բարի գիշեր, եղբայր ջան. Աստուած դուշմանիս էլ այդ տեսակ ընտանիք չ'կամենայ.

Ամեն. քեզ լոյս բարի։

III

Վերջին պատմուածքը Մարկոսը սկսեց մեծ դժուարութեամբ, երևում էր, որ արդէն յոգնել է և զզուել մարդկանց կեղտերի մասին ամեն օր նոր նոր բաներ լսելուց։

digitised by A.R.A.R.@

—Գիտես ինչ, Կիրակոս ջան՝ երէկ երեկոյեան Սողոմոնը այն պաշտօնի համար, որ ես ու դու գիտենք. իր քւէտուփն է դրել և փառաւորապէս ռևացրել է։

—Ի՞նչ ես ասում, անկարելի բան է, ախր բոլոր ձայնաւորները խօսք էին տւել նրան ընտրելու և վերջապէս ձայնաւորների մեծամասնութիւնն էր նրան առաջարկել թեկնածութիւնը դնելու, ինչպէս կարելի է, որ նրան սևացնեն։

—Հէնց գաղտնիքը դրա մէջ է, դէհ, լսի՛ր ես պատմեմ. Ինձ հետ պատահեց ձայնաւոր Պօղոսը. Նա եկել էր և նոր շինութեանն էր մտիկ տալիս, որտեղ ես էի բանում. երկար ու բարակ դէսից դենից խօսելուց յետոյ, ես հարցրի նրանից՝ թէ ինչպէ՞ս կբացատրէ պարոն Պօղոսը այս խաղը Սողոմոնի հետ՝ ձայնաւորների մեծամասնութիւնը մարդուն առաջ է քշում սևացնելու համար։ Եթէ այդ մարդը անարժան էր, ինչի էիք առաջ քշում, իսկ եթէ արժանաւոր էր, ինչո՞ւ չ'ընտրեցիք։

Պօղոսը ժպտաց և ինչ պատմեց, գիտես, ուղղակի մազերս բիզ—բիզ կանգնեցին։

Բանից դուրս է գալիս, որ տեղիս ձայնաւորները հասարակական գործունէութեան հետ այնքան ծանօթ են, ինչքան ես և դու չինացոց հետ։ Նրանց համար փոյթ չէ, թէ ինչ դրութեան մէջ են քաղաքի գործերը, կամ ովքեր կ'ընտրւեն հասարակական գործերը ղեկավարող։ Պարոնները սովորել են միշտ հաճոյքներով իրանց օրը անցկացնել՝ նրանք ծիծաղում են, երբ լաց է հարկաւոր, քնում, երբ հարկաւոր է արթուն մնալ։ Երեւակայիր, առանց ամաչելու, Պօղոսը խոստովանեց, որ ձայնաւորները Սողոմոնի հետ հանաք էին անում, որ նրան կ'ընտրեն. Նա էլ այնքան միամիտ էր գտնւել, որ հաւատացել էր և խայտառակւել։

—Զէ՞ որ հեշտ բան չէ մարդուս պատւի հետ խաղալ. Սողոմոնը կարող էր իմանալ և այն ժամանակ վայը եկել տարել էր ձեզ, ասացի ես Պօղոսին։

Պօղոսը բացատրեց, որ ձայնաւորները այնքան էլ միամիտ չեն, որ անհիմն գործ բռնեն՝ նրանք լաւ էին իմանում, որ Սողոմոնը անպատճառ կ'ստանայ նաև սպիտակ քւէներ և հետևապէս իւրաքանչիւրը նրանցից կարող էր Սողոմոնի առաջ արդարանալ, ասելով, որ ինքն է սպիտակ քւէ տւել։

—Տեսնում ես, Կիրակոս ջան, ինչ է կատարւում այժմեայ դարում։

—Մարկոս ջան, բայց մի օր կարող է այդ գաղտնիքը բացւել, և այդպէս չի մնայ։ Հա յիշեցի դրա նման մի օրինակ, ասաց Կիրակոսը, միշտ դու պատմում ես, ես լսում եմ, հիմայ էլ ես պատմեմ, դու լսի՛ր՝ Նահանգական քաղաքներից մէկում է դէպքը տեղի ունենում։

—Քեռին խորհուրդ է տալիս իր քրոջը որդուն, որին նա ինքն էլ չի համակրում, հասարակական մի պաշտօնի համար համաձայնւի իր թեկնածութիւնը դնելու, խօսք տալով, որ ինքը համակրող շատ ունի և կաշխատէ քրոջ տղին ընդունելու։

Քրոջ որդին հաւատում է քեռուն և համաձայնւում է։

Երկուշաբթից յետոյ կատարվում է այդ պաշտօնեայի ընտրութիւնը. իմիջի այլ թեկնածուների դնում է իր քւէատուփը և այդ քրոջ որդին։ Այդտեղ ձայնի իրաւունքով մասնակցում է և խորհրդատու քեռին. Նա իր քւէն տալիս է և անմիջապէս դուրս գնում ընտրութեան տեղից ընտանեկան հանգամանքներից ստիպւած։

Երբ բաց են անում քւէտուփերը, տեսնում են քրոջ տղին ոչ մի սպիտակ քւէ չէ քցած։

Քեռու քրոջ տղան, սաստիկ վիրաւորւած, ընտրութեան տեղից դուրս է գալիս և մռայլ քայլերը ուղղում դէպի իրանց տունը։ Ճանապարհին նրան հանդիպում է քեռին, որը իսկոյն հարցնում է քրոջ որդուց՝ ինչ եղաւ ընտրութիւնների արդիւնքը։ Նա եղաւ. պատասխանում է քրոջ որդին, սաստիկ վշտացած, որ ոչ ոք ինձ սպիտակ քւէ չ'տւեց։

Քեռին սկսում է նախատել ձայնաւորներին, թէ ինչ անամօթ մարդիկ են նրանք, խօսք են տալիս առանձին-առանձին, իսկ ընտրութեան օրը այդպէս անազնիւ վարւում։

Քրոջ որդին զարմացած հարցնում է քեռուց՝ դէ լաւ, ասենք ոչ ոք ձայնաւորներից ինձ չի սիրում, դորա համար էլ սև քւէ տւել, իսկ դու, քեռի, ինչու սպիտակ քւէ չ'տւիր։ Քեռին մի քիչ շփոթւում է և վերջը յայտնում է թէ՝ կարծում էր, որ քրոջ որդին գոնէ մի սպիտակ քւէ կ'ստանայ և նա կարող է խաբել, թէ ինքն է քցել, իսկ եթէ իմանար որ այսպիսի ելք պիտի ունենար գործը, գլուխը քարով կ'տար, չէր առաջարկի քրոջ տղի թեկնածութիւնը։

—Տեսնում ես Մարկոս ջան, սուտը ինչպէս է բռնւում, մի օր էլ մեր քաղաքի ձայնաւորները կ'ընկնեն քեռու դրութեան մէջ և այն ժամանակ նոր խելքերնեն գլուխները կ'գայ։

—Ի՞նչ արաւ քրոջ որդին քեռու այդպիսի պատասխան լսելուց յետոյ, հարցրեց Մարկոսը Կիրակոսից։

—Ի՞նչ պիտի անէ՝ թքեց քեռու երեսին ու այնուհետև նրա հետ վերջ տւաւ բոլոր բարեկամական յարաբերութիւնները։

—Դէհ, բաւական է գնա քնիր. Աստուած թող ինձ ու քեզ ազատ պահէ այդ տեսակ քեռիներից, ասաց Կիրակոսը Մարկոսին։

Մեր երկու բարեկամները, իրար ցանկանալով քաղցր քուն, գնացին իրանց տեղերը քնելու։

Մենք էլ, ընթերցող, գնա այժմ մնաք բարև ասենք մեր երկու բարեկամներին—Մարկոսին և Կիրակոսին, իսկ եթէ Մարկոսը երբ և իցէ նորութիւն կ'պատմէ, ես էլի պատրաստ եմ ձեզ հաղորդելու։

Ս. Թ.

digitised by A.R.A.R.@

# ՖԵԼԻԵՏՕՆ

*Խիստ ծանր և շփոթ ժամանակներումն ենք ապրում։*

*Ապրում ենք, բայց վայ էն ապրելուն։*

*Ամեն րոպէ սպասում ես, որ քեզ կամ դաշտային դատարանին կյանձնին և... 24 ժամում ամենահանգիստ կերպով այն աշխարհ կուղարկեն, կամ չարաճճի ռումբը կողքիդ կտրաքի և քո գեղեցիկ, փայփայած մարմինն ու կլորիկ, կուշտ փորը մսի ջախջախուած մի կտոր կդառնայ կամ կողքիցդ անցնող մեծապատիւ պարոն կազակն ու տէր զօրօդօվօյը ձեռքի ուժին փորձ կխրի և կամ..., որ ամենից հեշտն է, կմեռնես, հէնց այնպէս առանց «յարգելի պատճառի»։*

*Յարգելի պատճառի...*

*Այո, լաւ մեռնելու համար էլ այժմ պահանջւում է յարգելի պատճառներ։ Օրինակ. հասարակ մարդիկ իրաւունք ունեն մեռնել առանց յարգելի պատճառի. կարող են տուն գալ, ճաշել, պառկել հանգստանալու և... մեռնել։ Այդ՝ հասարակ մահկանացուները։*

*Իսկ մեծ մարդկանց հանդերձեալ աշխարհ գնալու համար, մանաւանդ որոշ ցենզ է պահանջւում։*

*Օրինակ, որպէս զի մի գեներալ-գուբերնատոր մեռնի—դրա համար հարկաւոր է, որ նա գործած լինի բազմաթիւ ոճիրներ՝ պօգրօմներ սարքի, քաղաքներ, գիւղեր, քանդի, մարդկերանց դաշտային դատարանի մատնի, լրագիրներ դադարեցնի, տպարաններ փակի, հարիւրաւորների աքսորի, մի խօսքով հարկաւոր է, որ նա բառիս բուն մտքով... գեներալ-գուբերնատոր լինի։*

*Եթէ օրինակ մի բարձր հոգևորական է մեռնում—դրա համար էլ պահանջւում է որոշ ցէնզ—այսինքն, որ մեռնել ցանկացողը լինի գոնէ ապագայ կաթողիկոսացու, ինչպիսին էր հանգուցեալ Նահապետ եպիսկոպոսը՝ պահպանողականների համար և Սեդրակեան Արիստակէսը—ազատամիտ—առաջադիմականների։*

*Երկուսն էլ խոշոր մարդիկ, հաստատակամ, խելացի, հաստատ, որոշ համոզմունքների տէր, երկուսն էլ կաթողիկոսացու. և ահա հէնց այդ բարձր ցէնզն էր, որ պատճառ եղաւ դրանց մահւան, այն պարզ և հասկանալի բացատրութեամբ, որ խոշոր մարդիկ խոշոր ցաւեր ունեն, իսկ խոշոր ցաւերը նրանց տանում են... հանգստութեան։*

*Դա միակ ըէալ մխիթարութիւնն է խոշոր մարդկանց համար՝ երկնքում, իսկ մանր մարդկանց - դրանց երկրպագուների՝ երկրում։*

*«Երկրում» ասելով, խնդրեմ «Երկիր» լրագիրը չհասկանաք, թէև հրատարակած աշխատակիցների ցանկի մէջ պատահում են բազմաթիւ խոշոր, ցենզաւոր մարդկանց անուններ—բայց նրանց թանկագին կեանքին ոչ մի վտանգ չի սպառնայ. թող ինչ ուզում են գրեն միհրանականները—բոլոր այդ կոչերն ու շրջաբերականները կան և կմնան որպէս մի կտրած բաժակի միջի փոթորիկ։ Սակայն եթէ կայ Երկրականների համար մի վտանգ, դա հէնց այն րոպէից, երբ նրանք իրանց միջից Պետական Դումայի համար պատգամաւորացուներ կընտրեն։*

*Վտանգ՝-իրենց հակառակորդ սօցիալ-դեմօկրատների նախանձից, վտանգ Պետերբուրգում՝ Թօփչիբաշևի խմբակի կողմից և ապա՝ պ. Ստոլիպինի. էլ չեմ ասում իշխան Գօլիցինի, որը, երևի, անհամբերութեամբ սպասում է իրեն բարեկամ մի հայ յեղափոխականի—որպէս զի այնտեղ՝ իր երկրում,* իւրայնոց մէջ *նրանց հետ իր հաշիւները տեսնի։*

*Եւ այսպէս, եթէ մեծ մարդկանց համար այս տարին վտանգաւոր է, միւս կողմից նա անվտանգ չէ և այն մանր մարդկանց համար, որոնք մեծ ձեռնարկութիւնների ախտով վարակւած, հրապարակ են գալիս որպէս խմբագիրներ... հասարակութեանը խաբելու։*

*Տէր Աստուած, ինչքան մեծ լրագիրներ մեռնում տարւեցին, մեծամեծ խօստումներով, սկսած «Արշալոյսից» մինչև վերջին «Զարկը»։*

*Դրանցից մէկը՝ հանգուցեալ «Յոյսը», գրում էր։*

*«Յոյսը հրատարակւում է յուսահատ, ճնշւած և անօգնական մարդկանց համար։ Նա պիտի լինի ապաւէն պօրտաբոյծ ձրիակերներից, հաստավիզ հարստահարողներից հալածւածներին և արիւնաքամ եղած անհատներին։ Նա պիտի»... բայց թողնենք դրան և կարդանք ինչ է խոստանում լինել «Զարկը»։*

*«...Որը ջերմ պաշտպան պիտի հանդիսանայ, բանւոր դասակարգերի դժբաղդոյն շահերին, նա*

digitised by A.R.A.R.@

սիրտը պիտի տայ հալածուած ու ճնշուած, պարկեշտ, արդիւնաւոր աշխատաւորներին և նրանց պատւին ու արժանիքներին նախանձախնդիր լինել—բարձրացնելով և իրանց վայել տեղը կանգնեցնելով» և այլն և այլն։

Եւ այս բոլորի համար կարևոր է, որ մարդիկ պ. Բալասանեանցին տան ընդամենը տարին երեք ռուբլի։

Մի ամբողջ ազատագրութիւն՝ երեք ռուբլիով...

Եւ ահա մենք տեսնում ենք, թէ ինչպէս միմեանց ետեւից մեռնում են դրանք բոլորը, մեր այս բարերարները և «Արշալոյսը» և «Ցոյս» և «Դրօշակ» և «Ընկեր» և «Արգասիք», մեռնում են և այդպիսով մեր փրկութեան յոյսը գնում կորչում է յաւիտենականութեան գրկում...

Իսկ դրանց տեղ ապրում են և փարթամանում Վիտտէներ, Ստոլիպիններ, Դուբասովներ...

Հէնց այդ բոլորը աչքի առաջ ունենալով է, որ ես գուշակում եմ, որ «Զարկն» էլ կմեռնի, կմեռնի հէնց նրա համար, որ նա դիտաւորեալ անձնազոհութիւն գործելու մտքով, վճռել է «պաշտպանել բանւոր դասակարգին և փրկել մարդկութեանը»։

Ի՞նչ անձնազոհութիւն, Տէր Աստուած։ Խեղճ հայ բանւոր, համբերատար հայ ընթերցող...

ՍՏՈՐԱ-ԿԷՏ

## Փ Ո Ս Տ—Ա Ր Կ Ղ

Փարիզ «Կովկասեան Ընկերութեանը»։ Նամակը ստացանք, բայց երկու ֆրանկը՝ ոչ։ 97 թ. բաժանորդագրութիւնը բացուած է, կուղարկենք ձեզ մի քանի համար միայն, մինչև կանխիկ ստանանք։

Թիֆլիս Բալասանեանցին։ Ձեր տուած յայտարարութիւնը տպելու համար ամենանգամին կ'վերցնենք երեք ռուբլի, իսկ մերը՝ խնդրում ենք չ'տպել «Զարկի» մէջ, որի գոյութեանը չենք հաւատում, աչքի առաջ ունենալով ձեզնից առաջ նոյնանման ռեկլամներով դուրս եկող «Ընկեր», «Դրօշակ», «Արգասիք», «Ցոյս» շաբաթաթերթերը։ Գոնէ մինչև այժմ դուրս եկած «Զարկի» երեք №№ը ցոյց են տալիս, որ նա անշեղ կերպով գնալու է նոյն ճանապարհով, ինչ և ձեր նախորդները—այսինքն դէպի բնական և շուտ մահը։ Խմբագիր անունը ձեռք բերելը պահանջում է ընդամենը 3 ր. 50 կ. իսկ թերթ տանելը շատ բան..... խրատուեցէք ձեր նախորդներից։


# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ԵՐԿԻՐ“

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ

Բաժանորդագինն է մինչև տարւայ վերջը Թիֆլիսում 1 ր. 80 կոպ., ամսական 60 կոպ., Թիֆլիսից դուրս մինչև տարւայ վերջը 2 ր., ամսական 70 կոպ. Արտասահման ամսական 3 ֆր.

Դիմել Тифлисъ, редакція „Еркиръ“ կամ Tiflis, (Russie) Rédaction „Erkir“.

Լոյս են տեսել

«ՅԱՌԱՋ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Բախ.—Հարուստներ և աղքատներ II տպագ. 15 կոպ.
2. Պեշէխոնով.—Հաց, լոյս և ազատութիւն 12 »
3. Փէդօրովիչ.—Ինչպէս են ժողովւում և ծախսւում ժողովրդական փողերը . . . 5 »
4. Կարմնլին.—Նոր լերան քարոզը . . . 2 »
5. Չերնով.—Գիւղացին և բանւորը . . 15 »
6. Պերներստորֆեր.—Ազգային հարցը և սոցիալ-դեմօկրատիան . . . . . . . 5 »
7. Պրամպոլինի.—Գիւղացիներին . . . . 5 »
8. Ս. Թոփչեան.—Արհեստակց. միութիւններ 15 »
9. Նովոտորժսկի.—Ի՞նչ է իրաւական պետութ. 15 »
10. Ս. Կարանով.—Հողային հարցը Նոր Զելանդիայում . . . . . . . 2 »
11. Ժան Ժորէս.—Բուրժ. սեփականութիւնը և նրա ապագայ զրաւումը . . 5 »
12. Ա. Աբեղեան.—Դեմօկրատ. ընտրութիւններ 12 »
13. Կարլ Կաուտսկի.—Ազգութիւնների հարցը Ռուսաստանում . . . . . 3 »
14. Ասատրեան(Ղարիբ)—Ազատութեան ճանապարհին . . . . . . . . 80 »
15. Ֆ. Լասսալ—Սահմանադրութեան էութեան մասին . . . . . . . . 5 »
16. Ա. Ն.—Ինչպէս կարելի է լուծել հող. հարցը 12
17. Վասիլյ Գոլուբև.—Ինչ է ժողովրդապետութիւնը. . . . . . . . . . . 2 »
18. Ա. Զաւարեան.—Վիճակագ. տեղ. գիւղ. ապրուստ. 25 »
20. Դիկշտէյն.—Ով ինչով է ապրում . . . 7 »
21. Լ. Ն.—Մի զրոյց հողի մասին . . . . . 5 »

Տպագրւում են եւ շուտով լոյս կտեսնեն

1. Ալֆոնս Դիւման.—Ժողովրդական օրէնսդրութիւնը դաշնակ. Զուիցերիայում։
2. Վլոսէկ.—Պետական կազմութեան հիմքերը արևմուտքում։
3. Լ. Շիշկօ.—Ագրարային ծրագրի հարցը և գիտական սոցիալիզմի տեսութիւնը։

Պատրաստւում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր։

Դիմել «Երկրի» խմբագրութեան


digitised by A.R.A.R.@

# ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# 1907 թւի

# ԱՇԽԱՏԱՆՔ

*ժողովրդական, տնտեսական, գիւղացիական*

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ, ինչ որ 1906 թւին, աշխատակիցների ՈՒԺԵՂԱՑՐԱԾ կազմով. ամեն համարում ՍՏՈՐԱ-ԳԾԻ ԶՒԱՐԹԱԿԱՆ ՖԷԼԻԷՏՕՆՈՎ

---

«ԱՇԽԱՏԱՆՔԸ» նւիրւած է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԻ շահերին և կարիքներին։

«ԱՇԽԱՏԱՆՔԸ» առանձին ուշադրութիւն է դարձնելու մեր ԳԱՒԱՌԻ հասարակական և տնտեսական կեանքի վրայ։

1907 թւի իր տարեկան բաժանորդներին «ԱՇԽԱՏԱՆՔԸ» տալու է ՁՐԻ, բացի 50 համար թերթից, բաղկացած 800 երկծալ, մեծադիր երեսներից, հետևեալ ՉՈՐՍ ԳՐՔԵՐԸ։

**Տարին 4 ր.**

1. «ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՒ ՀՈՂԸ» տնտեսական-հասարակական ուսումնասիրութիւն։
2. «ԱՄԵՆԱԼԱՒ ՎԱՐԸ» մասչեկի գիւղատնտեսական ցուցմունքներ։
3. «ԹԱՆԿԱԳԻՆ ԲՈՅՍԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԴԷՄ ԿՌՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ» հանրամատչելի գիտական ուսումնասիրութիւն այգեգործների, պարտիզպանների և բամբակագործների համար։
4. «ԳԻՒՂԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ» զրոյցներ ժամանակակից քաղաքական-տնտեսական-հասարակական հարցերի մասին։

Բացի դա բաժանորդներ ՁՐԻ ստանալու են՝

ԵՐԿՈՒ ԲԱԶՄԱԳՈՅՆ, ՇՔԵՂ ՆԿԱՐՆԵՐ (14×8 վերշ.)

I «Կարկուտից յետոյ» (կուղարկւի յունվարի 15-ին)

II «Գալիս են» (կուղարկւի սեպտ. 15-ին)

## ԲԱԺԱՆԵԳԻՆԸ

Գրքերի և նկարների հետ միասին ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՔՈՎ

| Ռուսաստանի համար | | Արտասահմանի համար | |
|---|---|---|---|
| Տարին | 4 ր. | Տարին | 18 ֆրանկ. |
| Կէս տարին | 2 ր. 50 կ. | Կէս տարին | 10 » |

Հասցէն՝ Тифлисъ, Редакцію журн. «Ашхатанкъ» Бебутовская № 56

Խմբագիր-Հրատարակիչ՝ Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

---

Типографія «Гермесъ». Тифлисъ, Мадатовская 5 Խմբ. Հրատ. ԱՇՈՏ ԱԹԱՆԱՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@